Հավելված 4
Հաստատված է Վարչության նախագահի 20.06.2023թ.-ի թիվ 86-Լ հրամանով

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 7

2.1 ԲԱՆԿԻ և ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԻՋև ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ 7

3. ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ 9

3.1 ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏՈՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ 9

3.2 ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ և ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ 10

3.3 ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄ 14

3.4 ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՈՒՄԸ 15

3.5 ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 17

3.6 ՀԱՃԱԽՈՐԴԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԸ (ՓԱՍՏԱՑԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ) և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 17

4 ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 19

4.1 ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝ 19

4.2 ՀԱՃԱԽՈՐԴԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է՝ 20

4.3 ՀԱՃԱԽՈՐԴՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ 21

5 ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 21

6 ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 21

1. Սահմանումներ և հապավումներ

«Բանկ»՝ «Արդշինբանկ» ՓԲԸ:

«ՀՍՎ»՝ Բանկի հաճախորդների սպասարկման վարչություն:

«Վճարային քարտ»՝ Բանկի կողմից որոշակի ժամկետով թողարկված դեբետային (հաշվարկային) կամ վարկային քարտի ձևով վճարային գործիք, որն օգտագործվում է կանխիկ դրամ ստանալու կամ անկանխիկ եղանակով վճարումներ կատարելու, ինչպես նաև Բանկի կողմից սահմանած այլ գործառնություններ կատարելու համար:

«Հաճախորդ»՝ Բանկի հետ վարկային գծի կամ Խառը պայմանագիր կնքած ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ այդպիսի պայմանագիր կնքելու առաջարկով ինքնուրույնաբար կամ Բանկի ծանուցման հիման վրա Բանկ դիմած ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր:

«Ընդհանուր սակագներ»՝ Բանկի կողմից հաստատված դեբետային (հաշվարկային) և(կամ) վարկային քարտերի տրամադրման և սպասարկման ընդհանուր սակագներ (սակագնային փաթեթներ): Ընդհանուր սակագները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքէջում և կարող են ժամանակ առ ժամանակ միակողմանիորեն փոփոխվել:

«Վարկավորման պայմաններ»՝ Բանկի կողմից հաստատված վճարային քարտերով տրամադրվող վարկային գծերի տրամադրման էական պայմաններ և (կամ) պայմանների փաթեթներ: Վարկավորման ընդհանուր պայմանները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքէջում և կարող են ժամանակ առ ժամանակ միակողմանիորեն փոփոխվել:

«Հաշվարկային քարտով վարկային գծի պայմանագիր կնքելու հաճախորդի առաջարկ-դիմում» (օֆերտա)՝ Հաճախորդի կողմից Բանկին ներկայացվող հաշվարկային քարտով վարկային գծի պայմանագիր կնքելու առաջարկ (օֆերտա), որով Հաճախորդը խնդրում է Բանկին՝ գործող Վարկավորման կանոններով և Վարկավորման պայմաններով իրեն տրամադրել վարկային գիծ՝ կնքելով հաշվարկային քարտով վարկային գծի պայմանագիր:

«Վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և(կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու առաջարկ-դիմում» (օֆերտա)՝ Հաճախորդի կողմից Բանկին ներկայացվող վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և(կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու առաջարկ (օֆերտա), որով Հաճախորդը խնդրում է Բանկին՝ վճարային քարտերի կանոններով, Վարկավորման կանոններով և Վարկավորման պայմաններով իրեն տրամադրել վարկային քարտ, դրան համապատասխան բացել բանկային (քարտային) հաշիվ և տրամադրել վարկային գիծ՝ ըստ սահմանված պահանջի որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոց ընդունելով ավանդային (բանկային հաշվի) պայմանագրից բխող պահանջի իրավունքի գրավը կամ առանց դրա՝ կնքելով վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և(կամ) գրավի խառը պայմանագիր:

«Ակցեպտ»՝ Բանկի կողմից Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի, ինչպես նաև Երաշխավորության պայմանագրի (առկայության դեպքում) պայմանները կատարելու ուղղությամբ գործողություններ ձեռնարկելը:

«Վարկային գծի պայմանագիր»՝ Վարկավորման կանոններով և Վարկավորման պայմաններով Հաճախորդի հաշվարկային քարտով վարկային գծի պայմանագիր կնքելու հաճախորդի առաջարկ-դիմումը և այն ընդունելու մասին Բանկի Ակցեպտը (հաշվարկային քարտին վարկային գիծ տրամադրելու և սպասարկելու միջոցով):

«Պայմանագիր»՝ Վճարային քարտերի կանոններով և սակագներով դեբետային (հաշվարկային) քարտ տրամադրելու և սպասարկելու դիմումը և այն ընդունելու մասին Բանկի Ակցեպտը (քարտային հաշիվ բացելու և վճարային քարտ թողարկելու միջոցով):

«Խառը պայմանագիր»՝ Վճարային քարտերի կանոններով, Վճարային քարտերի վարկավորման կանոններով և վարկային քարտի տրամադրման և սպասարկման սակագներով և վարկավորման պայմաններով Վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և (կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումը և այն այն ընդունելու մասին Բանկի Ակցեպը (քարտային հաշիվ բացելու, վճարային քարտ թողարկելու և(կամ) վարկային գիծ տրամադրելու և սպասարկելու միջոցով):

«Երաշխավորության պայմանագիր»՝ ի ապահովումն Վարկային գծի կամ Խառը պայմանագրից բխող պարտավորությունների կատարման երաշխավորության պայմանագիր կնքելու առաջարկ դիմումը (օֆերտան) և այն ընդունելու մասին Բանկի Ակցեպտը (հաշվարկային քարտին վարկային գիծ տրամադրելու և սպասարկելու միջոցով):

«Քարտային հաշիվ»՝ քարտապանի անունով և Պայմանագրի համաձայն բացված բանկային հաշիվ, որը օգտագործվում է վճարային քարտով կամ նրա վավերապայմանների օգտագործմամբ կատարված գործառնությունների ձևակերպման և փոխհաշվարկների իրականացման համար:

«Վարկային հաշիվ»՝ Հաճախորդի վարկային գծի տրամադրման և հաշվառման նպատակով Բանկի կողմից Հաճախորդի անունով բացվող հաշիվ (ոչ բանկային հաշիվ) կամ հաշիվների խումբ:

«Հաշվարկային քարտ»՝ վճարային քարտ, որի միջոցով քարտապանը համաձայն Բանկի հետ կնքված պայմանագրի իրականացնում է գործառնություններ, ինչպես քարտային հաշվին առկա սեփական միջոցների սահմաններում, այնպես էլ տրամադրված վարկային գծի սահմաններում: Հաշվարկային քարտը նախատեսված է Հաճախորդի սեփական միջոցների կառավարման համար առավել նպաստավոր պայմաններ սահմանելու համար:

«Վարկային քարտ»՝ վճարային քարտ, որի միջոցով քարտապանը, համաձայն Բանկի հետ կնքված պայմանագրի, իրականացնում է գործառնություններ ինչպես քարտային հաշվին առկա սեփական միջոցների սահմաններում, այնպես էլ Բանկի կողմից տրամադրված վարկային գծի սահմաններում:

«Վարկային գիծ»՝ Վարկավորման կանոններին և Վարկավորման պայմաններին համապատասխան Հաճախորդին հաշվարկային կամ Վարկային քարտով տրամադրվող վերականգնվող կամ նվազող վարկային առավելագույն սահմանաչափ (վարկի առավելագույն գումար), որի շրջանակներում Բանկը հաճախորդին տրամադրում է գումարներ՝ վարկեր (Կրեդիտներ):

«Հաշվետու ժամանակահատված»՝ Վարկային գծի օգտագործման ժամանակահատված, որը սկսվում է հերթական փոխհաշվարկի օրվանը հաջորդող օրվանից և ավարտվում հաջորդող փոխհաշավարկի օրը:Առաջին Հաշվետու ժամանակահատված է սկսվում է Վարկային գծի կամ Խառը պայմանագրի կնքման օրը, ընդ որում, եթե առաջին Հաշվետու ժամանակահատվածը մեկ ամսից փոքր է, ապա առաջին Հաշվետու ժամանակահատված է համարվում Վարկային գծի կամ Խառը պայմանագրի կնքման օրվանից մինչև հաջորդող երկրորդ փոխհաշվարկի օրն ընկած ժամանակահատվածը: :

«Վճարային ժամանակահատված»՝ Վարկավորման պայմաններով նախատեսված վարկային պարտավորության մարման համար սահմանված ժամանակահատված, որի ընթացքում Հաճախորդը կարող է (պարտավոր է) վճարել պարտադիր մարման գումարը կամ մարել ամբողջ վարկային պարտավորությունը:

«Փոխհաշվարկի օր»՝ Հաճախորդի և Բանկի համար Վարկային գծի պայմանագրից կամ Խառը պայմանագրից բխող փոխադարձ պարտավորությունների գծով հաշվարկների իրականացման օր, ընդ որում, եթե փոխհաշվարկի օրացուցային օրը հանդիսանում է ոչ աշխատանքային օր, ապա փոխհաշվարկի օր է հանդիսանում տվյալ օրացուցային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

«Մարման արտոնյալ ժամանակահատված»՝ Վարկավորման պայմաններով նախատեսված հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո վարկային պարտավորության մարման համար նախատեսված ժամանակահատված, որի ընթացքում Հաճախորդը կարող է վճարել պարտադիր մարման գումարը կամ մարել ամբողջ վարկային պարտավորությունը: Ընդ որում, ամբողջ վարկային պարտավորությունը մարելու դեպքում Հաճախորդն ազատվում է հաշվարկված (կուտակված) տոկոսագումարների վճարման պարտավորությունից: Մարման արտոնյալ ժամանակահատվածը ներառվում է Վճարային ժամանակահատվածի մեջ և չի կարող լինել ավելի երկար քան Վճարային ժամանակահատվածն է:

«Մարման հետաձգում» Վարկավորման պայմաններով նախատեսված ժամանակահատված, որի ընթացքում Վարկային գծի մարում (վերադարձ) չի իրականացվում և մարվում են (վերադարձվում են) միայն Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում հաշվեգրված տոկոսագումարը և այլ պարտավորությունները:

«Նվազեցման չափ» Վարկավորման պայմաններով նախատեսված Վարկային գծի որոշակի տոկոսով հաշվարկված մասնաչափ, որը նվազեցվում է Վարկային գծի սահմանաչափից յուրաքանչյուր Փոխհաշվարկի օր:***«Նվազագույն մարման սահմանաչափ»***՝ Փոխհաշվարկի օրվա ավարտի դրությամբ Վարկավորման պայմաններով նախատեսված փաստացի օգտագործված Վարկային գծի (հաճախորդի կողմից Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ստացված Կրեդիտների հանրագումարի) որոշակի տոկոսով հաշվարկված մասնաչափ, :

«Պարտադիր մարման գումար»՝ Հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ ձևավորված պարտավորություն, որը բաղկացած է՝

ա) Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ քարտային հաշվի գերածախսի (դեբիտորական պարտք) դիմաց հաշվարկված տույժից,

բ) Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ քարտային հաշվի գերածախսից (դեբիտորական պարտք),

գ) Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Պայմանագրով, Վարկային գծի պայմանագրով և (կամ) Խառը պայմանագրով նախատեսված վճարման ենթակա այլ միջնորդավճարներից,

դ) Նախորդ ժամանակաշրջանի համար ժամկետին չվերադարձված տոկոսագումարից (այդ թվում նաև ժամկետին չվերադարձված Կրեդիտի դիմաց հաշվարկված տոկոսից և ժամկետանց տոկոսների տույժից)՝ առկայության դեպքում,

ե) Նախորդ ժամանակաշրջանի համար ժամկետին չվերադարձված Նվազագույն մարման սահմանաչափերից կամ Նվազեցման չափից (Նվազեցման չափի համար չբավարարող մասից)՝ առկայության դեպքում,

զ) Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Վարկային գծի օգտագործված մասի դիմաց հաշվարկված (կուտակված) տոկոսագումարից,

է) Նվազագույն մարման սահմանաչափից կամ Նվազեցման չափից (Նվազեցման չափի համար չբավարարող մասից):

«Ժամանակաշրջանի ամբողջ պարտավորություն»՝ Ժամանակաշրջանի ամբողջ պարտավորությունը բաղկացած է

ա) Պարտադիր մարման գումարից և

բ) Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Վարկային գծի օգտագործված մասից (բացառությամբ Նվազագույն մարման սահմանաչափի):

«Ամբողջ պարտավորություն»՝ Ամբողջ պարտավորությունը բաղկացած է.

ա) քարտային հաշվի գերածախսի (դեբիտորական պարտք) դիմաց հաշվարկված տույժից,

բ) քարտային հաշվի գերածախսից (դեբիտորական պարտք),

գ) Պայմանագրով, Վարկային գծի պայմանագրով և (կամ) Խառը պայմանագրով նախատեսված վճարման ենթակա այլ միջնորդավճարներից,

դ) Վարկային գծի ամբողջ օգտագործված մասի դիմաց հաշվարկված (կուտակված) տոկոսագումարից,

ե) Վարկային գծի ամբողջ օգտագործված մասից:

Ամբողջ պարտավորությունը ձևավորվում է փաստացի մարման իրականացման օրը:

«Վարկավորման պայմանների փոփոխության վերաբերյալ ծանուցում»՝ Վարկային գծի կամ Խառը պայմանագրի էական պայմանների փոփոխությունների վերաբերյալ պայմանավորված հաղորդակցման եղանակով ու կարգով Հաճախորդին ներկայացվող գրավոր հաղորդագրություն:

«Վերականգնվող վարկային գիծ»՝ Վարկային գծի տեսակ, որի համաձայն Վարկային գծի պայմանագրի էական պայմանների խախտման և Վարկային գծի կասեցման հիմքերի բացակայության պայմաններում Վարկային գծի միջանկյալ մարումից հետո մինչև Վարկային գծի ամբողջությամբ մարման ամսաթիվը, մարված մասը կրկին հասանելի է դառնում Հաճախորդին օգտագործման համար:

«Նվազող վարկային գիծ»՝ Վերականգնվող վարկային գծի տեսակ, որի սահմանաչափը Վարկային պայմանագրով սահմանված չափով և պարբերականությամբ նվազում է:

«Վճարային սահմանաչափ»՝ Վճարային կամ հաշվարկային քարտի միջոցով Հաճախորդի օգտագործմանը հասանելի ընդհանուր գումար, ներառյալ սեփական և վարկային միջոցները:

«Գերածախս»՝ Հաճախորդի կողմից Վճարային սահմանաչափից ավել գումարի օգտագործում:

«Հեռակառավարման համակարգ» կամ «Համակարգ»՝ ARDSHINBANK I-BANKING համակարգ, որի միջոցով, էլեկտրոնային փաստաթղթերի և/կամ հատուկ տեխնիկական միջոցների (սերտիֆիկատներ, բանալիներ և այլն) կիրառմամբ Բանկը հաճախորդին մատուցում է առանձին բանկային ծառայություններ:

«Անձնական տվյալների մշակման և ԱՔՌԱ համաձայնություն»՝ Հաճախորդի կողմից տրվող համաձայնություն առ այն, որ Բանկը մշակի իր անձնական տվյալները ներքոնշյալ պայմաններով.

1.1 Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Բանկը մշակի (հավաքագրում, ամրագրում, մուտքագրում, համակարգում, պահպանում, օգտագործում և այլն) իր անձնական տվյալները, այն է՝ անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշի կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Հաճախորդի ինքնությունը համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, Բանկի հետ պայմանագրեր կնքելու, հետագայում Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու, Բանկի կողմից անցկացվող ակցիաների (առաջարկների), այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

1.1.1 Սույն կետի ուժով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկի կողմից հարցում կատարվի «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին և վերջինիս լիազորում է Բանկին տրամադրել իր ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք Բանկի կողմից կարող են հաշվի առնվել.

1. վարկային (փոխառության և այլն) պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս (սույն կետը պարտադիր պայման է վարկային հայտ ներկայացնելիս),
2. Մոնիթորինգ իրականացնելիս
3. Այլ ծառայություններ առաջարկելիս

Ինչպես նաև տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Բանկի կողմից Հաճախորդի հետ պայմանագիր կնքելու դեպքում տվյալ պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած պահի, առանց Հաճախորդին նախապես տեղյակ պահելու, «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ն Բանկին տրամադրի իր ապագայում առաջացող ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ:

Հաճախորդը սույնով տեղեկացվում է, որ վարկային հարցումների քանակը կարող է բացասական ազդեցություն ունենալ վարկային ամփոփ գնահատականի վրա: Եթե հարցումը կատարվում է մոնիթորինգի շրջանակներում, ապա այն բացասական ազդեցություն չի ունենում:

Սույն կետի ուժով Հաճախորդը լիազորում է Բանկին իրեն վերաբերելի ցանկացած տեղեկություն, որը հասանելի է դարձել Բանկին, ներառյալ իր անձնական տվյալները, տրամադրել այլ կազմակերպություններին և Բանկի գործակալներին, այդ թվում՝ վարկային բյուրոներին, ապահովագրական ընկերություններին կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և/կամ այլ անձանց պատկանող տեղեկատվական համակարգերին, տեղեկատվական ընկերություններին (այդ թվում, սակայն չսահմանափակվելով՝ «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ»-ին), նշված տեղեկությունները ստուգելու, վարկային պատմությունը պարզելու և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ապահովվածություն ստանալու համար: Միաժամանակ Հաճախորդը լիազորում է Բանկին այլ ընկերություններից ու կազմակերպություններից, ինչպես նաև իր աշխատանքային վայրից ստանալ իր անձնական տվյալները և Հաճախորդի վերաբերյալ այլ տեղեկություններ:

Հաճախորդը հավաստում է, որ գիտակցում է, որ տրամադրված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից, կարող են ազդել Բանկի կողմից կայացված համապատասխան որոշման վրա:

1.1.2 Անձնական տվյալների մշակման համաձայնությունը համարվում է Հաճախորդի կողմից տրված, և Բանկը ստանում է Հաճախորդի անձնական տվյալները մշակելու իրավունք՝ Հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրերի գործողության ընթացքում այդ պայմանագրերով սահմանված գործողությունների կատարման նպատակով, ինչպես նաև «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի հետ համագործակցող կազմակերպություններին/անհատներին տրամադրելու նպատակով, պայմանով, որ դա անհրաժեշտ է Բանկին համապատասխան ծառայությունը մատուցելու և/կամ Բանկի համար աշխատանքներ կատարելու և/կամ գույք ձեռքբերելու համար և/կամ բոլոր այն դեպքերում, երբ այդ տվյալների մշակման պահանջն ուղղակիորեն սահմանված է օրենքով:

1.1.3 Հաճախորդի կողմից անձնական տվյալների մշակման մասին համաձայնության գրավոր հետ կանչման, կամ անձնական տվյալների ուղղում կամ ոչնչացում (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար) կատարելու պահանջ ներկայացնելու դեպքում՝ Բանկը պարտավորվում է դադարեցնել անձնական տվյալների մշակման գործողությունները կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հաճախորդի և Բանկի միջև առկա չեն չկատարված պարտավորություններ և բացակայում են գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես Հաճախորդի և Բանկի միջև պայմանագրային հարաբերությունները ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Հաճախոդի անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում Հաճախորդի անձնական տվյալները դադարում են մշակվել Բանկի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

1.1.4 Անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է պայմանագրերի գործողության ողջ ժամանակահատվածի համար, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այդ դեպքերի համար սահմանված ժամանակահատվածի համար:

1.1 Ընդհանուր դրույթներ

1.2 Բանկի և Հաճախորդի միջև հարաբերությունների կարգավորում

1.2.1 Բանկի կողմից Հաճախորդին Վարկային գիծ տրամադրելու համար Բանկի և Հաճախորդի միջև՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ գլխով սահմանված պայմանագրի կազմմանը ներկայացվող պայմանագրի ձևի և էական պայմանների պահպանմամբ կնքվում է Վարկային գծի գրավոր պայմանագիր կամ Խառը պայմանագիր:

Հաճախորդն ընդունում է, որ Համակարգը հնարավորություն է ընձեռում Վարկային գիծ ստանալու նպատակով Բանկին դիմել նաև առցանց հարթակում, այդ թվում՝ Էլեկտրոնային

հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով հեռահար եղանակով ստորագրել և Բանկ ներկայացնել Պայմանագիր կնքելու Առաջարկ-դիմումներ, կնքված Պայմանագրերում փոփոխություն կատարելու Առաջարկ-դիմումներ, ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր (այդ թվում՝ տեղեկություններ, տեղեկանքներ, համաձայնություններ և այլն), ստանալ Բանկի դիրքորոշումը Պայմանագիր կնքելու, Պայմանագրում փոփոխություն կատարելու առաջարկ-դիմումներն ակցեպտավորելու կամ մերժելու վերաբերյալ:

Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Համակարգի միջոցով Վարկային գիծ ստանալու նպատակով համապատասխան էջում ստորագրման ենթակա դաշտերում հավաստող նշում դնելով և/կամ համապատասխան հավաստման կոճակը սեղմելով ամբողջությամբ համաձայնում է համապատասխան էջում, հղումում և/կամ փաստաթղթում զետեղված պայմանների, տեղեկությունների և այլ դրույթների հետ, ինչը Հաճախորդի համար առաջացնում է համապատասխան իրավունքներ, պարտավորություններ և այլ իրավական հետևանքներ:

1.2.2 Հաշվարկային քարտով վարկային գծի կամ Վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և(կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու Հաճախորդի առաջարկ-դիմումը (օֆերտան) Բանկի կողմից ընդունվելու դեպքում (Ակցեպտ) Հաճախորդին տրամադրվում է Վարկային գիծ: Վարկային գծի պայմանագիրը կամ Խառը պայմանագիրը կնքված, իսկ դրա գրավոր ձևը պահպանված է համարվում Բանկի կողմից Վարկային գծի տրամադրման՝ Հաճախորդի վարկային հաշվին արտացոլման պահից: Վարկային գծի տրամադրման դեպքում Բանկը Հաճախորդի առաջարկ-դիմումում նշած էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկում է վարկային գծի տրամադրման վերաբերյալ ծանուցում:

Համակարգի միջոցով Վարկային գծի տրամադրման դեպքում Հաճախորդի կողմից ներկայացված Հաշվարկային քարտով վարկային գծի կամ Վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և(կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումների, Վարկային գծի տրամադրման, Վարկավորման պայմանների փոփոխության վերաբերյալ ծանուցումների, Վարկային գծի էական պայմանների անհատական թերթիկի էլեկտրոնային տարբերակներն ուղարկվում են Հաճախորդի առաջարկ-դիմումում նշած էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ մարման ժամանակացույցը հասանելի է Համակարգի համապատասխան էջում:

1.2.3 Վարկային գիծը սպասարկվում է Վարկային գծի պայմանագրին կամ Խառը պայմանագրի համապատասխան:

1.2.4 Հաշվարկային քարտով վարկային գծի կամ Վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և (կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու Հաճախորդի առաջարկ-դիմումի (օֆերտայի) համաձայն Հաճախորդին Վարկային գիծը տրամադրվում է դրանցում նշված արժույթով:

1.2.5 Վարկային և (կամ) Հաշվարկային քարտի թողարկման դեպքում քարտային հաշվի բացումը և սպասարկումը իրականացվում է Պայմանագրի կամ Խառը պայմանագրի համաձայն:

1.2.6 Վարկավորման պայմանները և Վարկավորման կանոնները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքէջում և անվճար տրամադրվում են Բանկի (մասնաճյուղի) տարածքում գտնվող յուրաքանչյուր Հաճախորդին՝ նրա առաջին իսկ պահանջով:

1.2.7 Վարկային գիծը Հաճախորդի կողմից կարող է օգտագործվել Վարկային կամ Հաշվարկային քարտի միջոցով կամ այլ, օրենքով չարգելված կերպով, Պայմանագրով նախատեսված գործառնությունների իրականացման համար, մասնավորապես այդ գործառնությունները ներառում են Հաճախորդի գնումները, այլ վճարումները, կանխիկի պահանջի ֆինանսավորումը և այլն:

1.2.8 Վարկավորման կանոններում և Վարկավորման պայմաններում կատարվող բոլոր փոփոխությունները և լրացումները՝ դրանց ուժի մեջ մտնելու պահից, տարածվում են նաև մինչև դրա ուժի մեջ մտնելը Բանկի և Հաճախորդի միջև Վարկային գծի կամ Խառը պայմանագրից ծագած հարաբերությունների վրա, այսինքն ունի հետադարձ ուժ, եթե դրանք կիրառելի են այդ

հարաբերությունների նկատմամբ: Նշվածի վերաբերյալ Բանկը հեռախոսային կապի միջոցով կարճ հաղորդագրություն (SMS) է ուղարկում Հաճախորդի հեռախոսահամարին: Հաճախորդն իրավունք ունի հրաժարվել նշված փոփոխություններից և լրացումներից մինչև դրանց ուժի մեջ մտնելը՝ սույն կանոններով սահմանված կարգով լուծելով Բանկի հետ կնքած Վարկային գծի պայմանագիրը կամ Խառը պայմանագիրը և ամբողջությամբ կատարելով ստանձնած պարտավորությունները, իսկ Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի ժամկետի փոփոխման և (կամ) սահմանաչափի ավելացման դեպքում՝ պահանջելով չկիրառել այդ փոփոխությունը իր նկատմամբ: Եթե Հաճախորդը մինչև փոփոխությունների ու լրացումների ուժի մեջ մտնելը չի լուծել Բանկի հետ կնքած Վարկային գծի պայմանագիրը կամ Խառը պայմանագիրը, ապա դրանից ծագած հարաբերությունների նկատմամբ լրիվ և ամբողջական ծավալով տարածվում են կատարված փոփոխություններն ու լրացումները:

1.2.9 Վարկավորման Կանոնները կարող են պարբերաբար Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել, որոնք Բանկի հետ մինչև փոփոխված կանոնների հրապարակումը վարկային գծի կամ Խառը պայմանագիր կնքած Հաճախորդների համար ուժի մեջ են մտնում դրանց հրապարակման ամսաթվին հաջորդող 7-րդ աշխատանքային օրը, իսկ նոր հաճախորդների համար՝ հրապարակման պահից, եթե Բանկի կողմից փոփոխություններն ուժի մեջ մտնելու առավել ուշ ժամկետներ չեն սահմանվում: Ընդ որում՝ հրապարակման ամսաթիվ է համարվում Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում դրանց տեղադրման ամսաթիվը: Հրապարակման օրը Բանկը տեղեկացնում է Հաճախորդին սույն կանոնները փոփոխելու վերաբերյալ, ստորև նշված տեղեկացման եղանակներից որևիցե մեկի միջոցով.

ա. Բանկի մասնաճյուղերում և գլխամասում տեղեկատվական ստենդերի և այլ տեսանելի վայրերում տեղեկատվության տպագիր տարբերակների տեղադրում,

բ. Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղեկատվության տեղադրման միջոցով (www.ardshinbank.am),

գ. Քարտապանի բջջային հեռախոսին SMS հաղորդագրության ուղարկման միջոցով:

Վարկավորման կանոնների բոլոր նախորդ խմբագրությունները ենթակա են պահպանման և հասանելի են Հաճախորդներին դրանք ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած 4 (չորս) տարվա ընթացքում:

1.2.10 Հաճախորդը թույլատրում է Բանկին՝ սպասարկման պատշաճ ապահովման և անվտանգության նկատառումներից ելնելով, վարելու իրենց միջև կատարվող հեռախոսազանգերի ձայնագրություն: Տվյալ ձայնագրությունները ունեն ապացուցողական ուժ և միմյանց միջև վեճերի ծագման դեպքում օգտագործվում են որպես թույլատրելի և պատշաճ ապացույց:

1.2.11 Հաճախորդն իրավունք է վերապահում Բանկին անակցեպտ կարգով՝ առանց Հաճախորդին ծանուցման և(կամ) վերջինիս կողմից լրացուցիչ հանձնարարության, Վարկային գծի չօգտագործված մասն ուղղել Հաճախորդի՝ Բանկի հանդեպ առկա պարտավորությունների (ժամկետային և(կամ) ժամկետանց) մարմանը, ինչի արդյունքում Վարկային գծի չօգտագործված մասը համարվում է Հաճախորդի կողմից օգտագործված:

1.2.12 Հաճախորդն իրավունք է վերապահում Բանկին անակցեպտ կարգով՝ առանց Հաճախորդին ծանուցման և(կամ) վերջինիս կողմից լրացուցիչ հանձնարարության, Հաճախորդի հաշվին մուտքագրված կամ առկա միջոցներն ուղղել Հաճախորդի՝ Բանկի հանդեպ առկա պարտավորությունների (ժամկետային և(կամ) ժամկետանց) մարմանը:

1.2.13 Սույն կանոնների և Հաճախորդի օֆերտայի միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է սույն կանոններին:

2. Վճարային քարտերի վարկավորում

2.1 Վճարային քարտով վարկային գծի տրամադրում

2.1.1 Բանկը Հաճախորդներին Վարկավորման պայմաններով սահմանված նպատակներով օգտագործելու համար տրամադրում է Վարկային գիծ:

2.1.2 Բանկը Հաճախորդի համար սահմանված Վարկային գծի սահմաններում հաճախորդին տրամադրում է գումարներ (այսուհետ՝ Կրեդիտներ)՝ դրանք հաճախորդի քարտային հաշվին փոխանցելու միջոցով:

2.1.3 Բանկը Վճարային քարտերով Հաճախորդի վարկավորումն իրականացնում է Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով նախատեսված պայմաններով՝ ըստ ներքոհիշյալ Վարկային գծի տեսակների՝

3.1.3.1 Վերականգնվող վարկային գիծ,

3.1.3.2 Վերականգնվող վարկային գիծ Մարման արտոնյալ ժամանակահատվածով,

3.1.3.3 Նվազող վարկային գիծ,

2.1.4 Վարկային գծի կամ Կրեդիտների տրամադրումն արտացոլվում է Հաճախորդի համապատասխան վարկային հաշիվներում, որոնք կցված են քարտային հաշվին:

2.1.5 Վարկային գծի կամ Կրեդիտների ստացումը հավաստվում է վարկային հաշվից կամ քարտային հաշվից տրված քաղվածքով: Վարկային գծի կամ Կրեդիտի տրման ամսաթիվ է հանդիսանում Հաճախորդի վարկային հաշվին կամ քարտային հաշվին դրա արտացոլման ամսաթիվը:

2.1.6 Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի գործողության ընթացքում Բանկը կարող է դադարեցնել Վարկային գծի կամ Կրեդիտների տրամադրումը եթե Հաճախորդը թույլ է տվել Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումներ, մասնավորապես, Վճարային ժամանակահատվածում չի վճարել Պարտադիր մարման գումարը, չի պահպանել Վարկավորման կանոնները և այլն:

2.1.7 Վարկային գծի պայմանագրի և Խառը պայմանագրի էական պայմանները (Վարկային գիծը, տարեկան տոկոսադրույքը, Հաշվետու ժամանակահատվածը, Վճարային ժամանակահատվածը, տարեկան փաստացի տոկոսադրույքը, տուժանքը (տույժ և տուգանք), Նվազագույն մարման սահմանաչափը, Մարման արտոնյալ ժամանակահատվածը, փոխհաշվարկի օրը, Վարկային գծի պայմանագրի ժամկետը և այլն) սահմանվում են Վարկային գծի պայմանագրով և(կամ) Խառը պայմանագրով և Վարկավորման պայմաններով:

2.1.8 Բանկը Հաճախորդին Վարկային գիծը տրամադրում է Հաճախորդի վարկունակության գնահատման համակարգերի արդյունքներով:

2.2 Վարկային գծի մարումներ և տոկոսագումարների վճարումներ

2.2.1 Բանկը Հաճախորդին Վարկային գիծ (Կրեդիտ) է տրամադրում Վարկային գծի պայմանագրից կամ Խառը պայմանագրից բխող պարտավորությունները կատարելու, վարկային գիծը ժամանակին մարելու (վերադարձնելու) և Վարկային գծի օգտագործման համար հաշվարկված (կուտակված) տոկոսագումարները վճարելու պայմանով:

2.2.2 Վարկային գծի օգտագործման (Կրեդիտի ստացման) համար Հաճախորդը Բանկին վճարում է տոկոսներ Վարկային գծի պայմանագրում կամ Խառը պայմանագրում նշված չափով:

2.2.3 Վարկային գծի օգտագործման (Կրեդիտի ստացման) համար տոկոսների հաշվարկումը (կուտակումը) իրականացվում է յուրաքանչյուր օր սկսած Վարկային գծի (Կրեդիտի) տրամադրման օրվանից՝ փաստացի օգտագործված գումարի նկատմամբ և տրամադրման օրվանից հետո ընկած փաստացի օգտագործման օրերի քանակով:

2.2.4 Վարկային գիծը (Կրեդիտը) և տոկոսագումարները Հաճախորդի կողմից մարվում (վերադարձվում) են Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

2.2.5 Վարկային գիծն ամբողջությամբ Հաճախորդը պետք է մարի (վերադարձնի) մինչև Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտը:

2.2.6 Վարկային գիծը (Կրեդիտը) և տոկոսագումները Հաճախորդի կողմից մարվում (վերադարձվում) են՝

3.2.7.1 **Վերականգնվող Վարկային գիծ տրամադրելու դեպքում՝՝** Վարկային գիծը, դրա դիմաց հաշվարկված տոկոսագումարները և այլ պարտավորությունները մարվում են (վերադարձվում են) Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով և Վարկավորման պայմաններով նախատեսված Վճարային ժամանակահատվածի օրերի ընթացքում նվազագույնը Պարտադիր մարման գումարի չափով: Վարկային գծի մարված գումարը Վարկային գծի պայմանագրով, Խառը պայմանագրով կամ Պայմանագրով նախատեսված միջնորդավճարների և տուժանքների գանձումից հետո կարող է կրկին օգտագործվել Հաճախորդի կողմից մինչև Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի ժամկետի ավարտը:

3.2.7.2 **Վերականգնվող վարկային գիծ Մարման արտոնյալ ժամանակահատվածով տրամադրելու դեպքում՝** Վարկային գիծը, դրա դիմաց հաշվարկված տոկոսագումարները և այլ պարտավորությունները մարվում են (վերադարձվում են) Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով և Վարկավորման պայմաններով նախատեսված Մարման արտոնյալ ժամանակահատվածի օրերի ընթացքում նվազագույնը Պարտադիր մարման գումարի չափով: Ընդ որում, եթե Հաճախորդը մարում (վերադարձնում) է Բանկի հանդեպ ունեցած Ժամանակաշրջանի ամբողջ պարտավորությունը, ապա Հաճախորդն ազատվում է տվյալ ժամանակաշրջանում Վարկային գծի օգտագործված մասի դիմաց հաշվարկված (կուտակված) տոկոսագումարը վճարելու պարտականությունից: Մարման արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում Ժամանակաշրջանի ամբողջ պարտավորություններից պակաս մարելու (վերադարձնելու) դեպքում Մարման արտոնյալ ժամանակահատվածի վերջին օրը իրականացվում է Հաշվետու ժամանակաշրջանի Վարկային գծի օգտագործված մասի դիմաց տոկոսագումարների հաշվարկ, որը ենթակա է վճարման հաջորդ Վճարային ժամանակահատվածի ընթացքում: Վարկային գծի մարված գումարը Վարկային գծի պայմանագրով, Խառը պայմանագրով կամ Պայմանագրով սահմանված միջնորդավճարների և տուժանքների գանձումից հետո կարող է կրկին օգտագործվել Հաճախորդի կողմից մինչև Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի ժամկետի ավարտը:

Վճարման արտոնյալ ժամանակահատվածը չի տարածվում Հաճախորդի կողմից Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի գործողության վերջին օրը Կրեդիտի գումարի վճարման դեպքի վրա:

Հաճախորդի կողմից Պարտադիր մարման գումարից պակաս մարելու (վերադարձնելու) կամ չմարելու (չվերադարձնելու) դեպքում Հաճախորդը զրկվում է Մարման արտոնյալ ժամանակահատվածից, որը վերականգնվում է Հաճախորդի կողմից Ժամկետանց պարտավորության ամբողջական կատարումից հետո:

3.2.7.3 **Նվազող վարկային գիծ տրամադրելու դեպքում՝** Վարկավորման պայմաններով նախատեսված Մարման հետաձգման ժամակահատվածի ընթացքում Հաճախորդը մարում է (վերադարձնում է) միայն Վարկային գծի օգտագործված մասի դիմաց հաշվարկված (կուտակված) տոկոսագումարը և այլ պարտավորությունները: Մարման հետաձգման ժամանակահատվածից հետո ընկած յուրաքանչյուր Վճարային ժամանակահատվածի ընթացքում Հաճախորդը մարում է (վերադարձնում է) Նվազեցման չափը կամ նվազեցում իրականացնելու համար Նվազեցման չափի չբավարարող գումարը: Պայմանագրով նախատեսված միջնորդավճարների և տուժանքների գանձումից հետո Վարկային գծի Նվազեցման չափից ավել մարված (վերադարձված) գումարը կարող է կրկին օգտագործվել Հաճախորդի կողմից մինչև Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի ժամկետի ավարտը:

2.2.7 Վարկավորման կանոնների 2.2.6 կետը շարադրվում է բացառապես համապատասխան տրամադրված Վարկային գծի տեսակի (տեսակների), իսկ մնացածները հանվում են Վարկային գծի պայմանագրից կամ Խառը պայմանագրից:

2.2.8 Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով նախատեսված Վարկային գծի Պարտադիր մարման գումարը Վճարային ժամանակահատվածում Հաճախորդի կողմից ամբողջությամբ չմարելու դեպքում Վարկային գծի տվյալ Հաշվետու ժամանակաշրջանի Նվազագույն մարման սահմանաչափը և հաշվարկված (կուտակված) տոկոսագումարը համարվում են ժամկետանց, իսկ Հաճախորդի Վարկային գծի կամ Խառը պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտված, բացառությամբ Վարկավորման կանոններով նախատեսված դեպքերի: Ընդ որում, Ժամկետանց պարտավորության ամբողջությամբ մարվելու դեպքում Բանկը կվերականգնի Հաճախորդի կողմից Վարկային գիծը օգտագործելու հնարավորությունը, բացառությամբ սույն կանոններով և համապատասխան վարկավորման պայմաններով նախատեսված դեպքերի:

2.2.9 Նվազագույն մարման սահմանաչափը կամ տոկոսագումարը 90 օրացուցային օր և ավել ժամկետանց լինելու դեպքում Վարկային գիծն ամբողջությամբ ժամկետանցվում է և Բանկը կասեցնում է Վարկային գծի հետագա օգտագործման հնարավորությունը:

2.2.10 Վարկային գծի մարումը, Պարտադիր մարման գումարը, ժամկետային և ժամկետանց ողջ պարտավորությունների մարումը պետք է իրականացվի Հաճախորդի անվամբ բացված քարտային հաշվին՝ բանկային փոխանցմամբ, քարտային (մի քարտային հաշվից մյուս քարտային հաշվին) փոխանցմամբ, ԱԳՄ-ի (բանկոմատի) կամ վճարային տերմինալների միջոցով քարտային հաշվին դրամական միջոցների մուտքագրմամբ կամ Բանկի դրամարկղ կանխիկ մուծմամբ: Ընդ որում, ԱԳՄ-ի (բանկոմատի), վճարային տերմինալների և քարտային կամ բանկային փոխանցումների միջոցով մուծումներ (վճարումներ) կատարելու դեպքում Հաճախորդը գիտակցում է, որ գործարքի հաշվանցումը կարող է իրականացվել առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում, ինչը կարող է հանգեցնել Հաճախորդի Վարկային գծի պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման (Հաճախորդը կարող է ունենալ ժամկետանց պարտավորություններ) և իր վրա է վերցնում դրա հետևանքով բոլոր բացասական հետևանքների ռիսկը:

2.2.11 Վարկային գիծը (Կրեդիտների հանրագումարը) մարված (վերադարձված), իսկ հաշվարկված (կուտակված) տոկոսագումարները վճարված են համարվում այն օրը (ամսաթվին), երբ Վարկառուի անվամբ բացված վարկային հաշվին մուտքագրելու նպատակով Վարկառուի քարտային հաշվին կամ Բանկի դրամարկղ (ընթացիկ կամ թղթակցային հաշվին) գումար կմուտքագրվի (կփոխանցվի), որը կբավարարի այդ օրվա դրությամբ Վարկային գիծը, տոկոսագումարը և Վարկառուի կողմից Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում Բանկին վճարման ենթակա հատուցման գումարը, ինչպես նաև, առկայության դեպքում, վճարման ենթակա միջնորդավճարների գումարները մարելու (վճարելու) համար:

2.2.12 Վարկային գծի կամ Խառը պայմանագրով նախատեսված դրամական պարտավորությունները լրիվ կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում Քարտային հաշվին առկա և(կամ) մուտքագրված գումարից նախապես մարվում են՝ Ժամանակաշրջանի ամբողջ պարտավորությունը (ըստ Հասկացություններ բաժնում սահմանված հերթականության): Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի կատարման ընթացքում քարտապանի կողմից ժամկետանց պարտքեր ձևավորելու դեպքում վերջինիս կողմից վճարվող գումարներից առաջնահերթ մարվում է Պարտադիր մարման գումարը (ըստ Հասկացություններ բաժնում սահմանված հերթականության): Սույն մարման հերթականությունը միակողմանիորեն կարող է Բանկի կողմից ինքնուրույնաբար փոփոխվել՝ առանց քարտապանի համաձայնության:

2.2.13 Հաճախորդին սպասարկող բանկի կամ միջնորդ բանկերի կողմից Վարկային գծի կամ հաշվարկված (կուտակված) տոկոսագումարների ուշ փոխանցումը հիմք չի հանդիսանում Հաճախորդին Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման համար պատասխանատվությունից ազատելու համար:

2.2.14 Հաճախորդի կողմից Վարկային գիծը Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով նախատեսված, ինչպես նաև Բանկի ծանուցման մեջ նշված ժամկետներին չվերադարձվելու դեպքում Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը (կուտակումը) դադարում է այդ ժամկետների ավարտմանը հաջորդող օրվանից, և այդ օրվանից մինչև Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական ու լրիվ կատարումը վերադարձման ենթակա Վարկային գծի ժամկետանց մասի նկատմամբ հաշվարկվում (կուտակվում) են տոկոսներ՝ Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով նախատեսված տոկոսների չափով:

2.2.15 Բանկը կարող է Հաճախորդից պահանջել Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող հանձնարարականներ, երաշխիքներ, գրավ, և Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարում:

2.2.16 Վարկային գծի պայմանագիրը կամ Խառը պայմանագիրը համարվում է Հաճախորդի կողմից խախտված, եթե Վարկային գիծը (Կրեդիտը), ներառյալ հաշվարկված (կուտակված) տոկոսագումարները չի մարվում (վճարվում) Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով նախատեսված ժամկետներին ու պայմաններին համապատասխան, կամ առկա են սույն Վարկավորման կանոնների 2.4.1 կետում նշված հիմքերից որևէ մեկը, կամ Վարկային գիծն ամբողջությամբ վաղաժամկետ Հաճախորդի կողմից չի մարվել (վերադարձվել) դրա վերաբերյալ Բանկի ծանուցումն ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

2.2.17 Տոկոսի և տուժանքի հաշվեգրման համար հիմք է ընդունվում օրացուցային օրերի փաստացի քանակը:

2.2.18 Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով Հաճախորդի վճարման պարտականությունները կարող են կատարվել երրորդ անձանց կողմից:

2.2.19 Հաճախորդի կողմից Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով Բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու դեպքում Բանկի կողմից պատասխանատվության միջոցներ (տուժանք կամ Հաճախորդի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոց) չի կիրառվում:

2.2.20 Բանկի և Հաճախորդի միջև ցանկացած հաղորդակցում, որը կապված է Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի պայմանների կամ նրանց միջև հաղորդակցման կարգի կամ նրանց իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման հետ կամ վերաբերում է Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ Բանկի ներքին ակտերին, իրականացվում է Հաճախորդի կողմից Վարկային գծի պայմանագրում կամ Խառը պայմանագրում նշված նախընտրած եղանակով: Ընդ որում, սույն կետում նշված տեղեկատվությունը համարվում է պարտադիր ներկայացման տեղեկատվություն:

2.2.21 Բանկի և Հաճախորդի Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով նախատեսված հաղորդակցման կարգն ու պայմանները գործում են այն դեպքերում, երբ սպառողների իրավունքների պաշտպանության նպատակից ելնելով այլ կարգ, պայմաններ, ձևեր և նվազագույն պահանջներ սահմանված չեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

2.2.22 Բանկի և Հաճախորդի հաղորդակցումն իրականացվում է Հաշվարկային քարտով վարկային գծի կամ վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և(կամ) գրավի

խառը պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումում նշված կամ Հաճախորդի կողմից հետագայում գրավոր ծանուցած այլ բնակության հասցեով, եթե Հաճախորդը նախընտրել է պարտադիր ներկայացման տեղեկատվությունը ստանալ փոստային կապի միջոցով: Հաղորդումը համարվում է ուղարկված պատշաճ կարգով, եթե այն ուղարկվել է հասցեատիրոջը ցրիչի, փոստային առաքման միջոցով Բանկին հայտնի վերջին հասցեով, թեկուզև հետագայում պարզվի, որ Հաճախորդը նշված ծանուցումը փաստացի չի ստացել: Բանկի ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում համարվում է Հաճախորդի կողմից ստացված սույն կարգով ուղարկման պահից սկսած հինգերորդ օրը: Հաղորդումն ուղարկելու օրը որոշվում է Բանկի ելքային ամսաթվով կամ փոստի ծառայություններ մատուցող կազմակերպության դրոշմակնիքով:

2.2.23 Բանկի և Հաճախորդի հաղորդակցումն իրականացվում է Հաշվարկային քարտով վարկային գծի կամ վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և(կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումում նշված կամ Հաճախորդի կողմից հետագայում գրավոր ծանուցած այլ բջջային հեռախոսահամարին SMS ուղարկելու միջոցով, եթե Հաճախորդը նախընտրել է պարտադիր ներկայացման տեղեկատվությունը ստանալ բջջային կապի միջոցով: Հաղորդումը համարվում է ուղարկված պատշաճ կարգով, եթե այն ուղարկվել է Հաճախորդի բջջային հեռախոսի Բանկին հայտնի վերջին հեռախոսահամարով, թեկուզև հետագայում պարզվի, որ Հաճախորդը նշված ծանուցումը փաստացի չի ստացել: Հաղորդում ուղարկելու օրը որոշվում է համապատասխան ծառայությունների մատուցող կազմակերպության կողմից տրամադրվող հաշվետվության միջոցով:

2.2.24 Բանկի և Հաճախորդի հաղորդակցումն իրականացվում է Հաշվարկային քարտով վարկային գծի կամ վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և(կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումում նշված էլեկտրոնային փոստին հաղորդում ուղարկելու միջոցով, եթե Հաճախորդը նախընտրել է պարտադիր ներկայացման տեղեկատվությունը ստանալ էլեկտրոնային փոստի միջոցով: Հաղորդումն ուղարկվում է Հաճախորդի էլեկտրոնային փոստի Բանկին հայտնի վերջին հասցեով և համարվում է Հաճախորդի կողմից ստացված Բանկի կողմից հետադարձ ծանուցումն ստանալու պահից, իսկ հետադարձ ծանուցում չստացվելու դեպքում՝ էլեկտրոնային հաղորդագրության ուղարկմանը հաջորդող երրորդ օրը:

2.2.25 Պարտադիր ներկայացման տեղեկատվությունում Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխություն կատարելու դեպքում դրա վերաբերյալ տեղեկատվությունը Հաճախորդին տրամադրվում է համապատասխան որոշման կայացումից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2.26 Հաճախորդի կողմից մինչև 5000 ՀՀ դրամ վճարների կուտակումը չի համարվում Վարկային գծի և/կամ Խառը պայմանագրի խախտում և չի հանգեցնում այդ վճարների ժամկետանցման:

2.3 Վարկային գծի ժամկետի երկարաձգում

2.3.1 Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի ժամկետը Բանկը կարող է պարբերաբար երկարաձգել, բայց ոչ ավել քան տվյալ վարկային գծի տեսակի համար Վարկավորման պայմաններով նախատեսված վարկային գծի տրամադրման առավելագույն ժամկետով: Երկարաձգում իրականացնելիս Բանկը կարող է վարկավորման պայմանները համապատասխանեցնել տվյալ պահին տվյալ վարկատեսակի համար Բանկում գործող վարկավորման պայմաններին՝ ծանուցելով հաճախորդին:

2.3.2 Բանկը Վարկային գծի վերաբերյալ որոշում կայացնում է Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի ժամկետի ավարտից 2 (երկու) ամիս առաջ և Վարկային գծի երկարաձգում իրականացվում է Վարկավորման պայմաններով նախատեսված պահանջներին բավարարելու դեպքում:

2.3.3 Վարկավորման պայմաններով նախատեսված պահանջներին չբավարարելու դեպքում Վարկային գծի երկարաձգում չի իրականացվում և վերջին Հաշվետու ժամանակաշրջանից 10 (տասը) օրացուցային օր առաջ Վարկային գծի չօգտագործված մասը զրոյացվում է և ենթակա չէ վերականգնման:

2.3.4 Վարկային գծի չերկարաձգման դեպքում վերջին Փոխհաշվարկի օրը ձևավորվում է Պարտադիր մարման գումարը, որը հավասար է Ամբողջ պարտավորությանը, որը ենթակա է մարման (վերադարձման) մինչև Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի ժամկետի ավարտը:

2.4 Վարկային գծի վաղաժամկետ մարում

2.4.1 Սույն կանոնների 3.4.1.1-3.4.1.10 ենթակետերում նշված դեպքերում, Բանկն իր հայեցողությամբ կարող է, Հաճախորդին նախապես տեղեկացնելով, պահանջել պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում (ներառյալ տոկոսները, տուժանքը (տույժ և տուգանք) ինչպես նաև, առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու, կասեցնել վարկային գծի հետագա օգտագործումը, եթե՝

3.4.1.1. Հաճախորդը Բանկի օգտին 7 (յոթ) օր շարունակ չի կատարել կամ անպատշաճ է կատարել Վարկային գծի պայմանագրից կամ Խառը պայմանագրից բխող պարտավորությունները կամ Բանկի ծանուցման պահանջները կամ օրենքով սահմանված ցանկացած այլ պարտավորություն, կամ

3.4.1.2. սկսված որևէ դատական կամ իրավական այլ գործընթացը կամ իրադրության այլ փոփոխությունը կասկածի տեղիք է տալիս, որ Հաճախորդն ի վիճակի չի լինի ժամանակին վճարել Բանկին ունեցած պարտքերը, ադպիսիք են համարվում, բայց սրանով չեն սահմանափակվում հետևյալ դեպքերը.

3.4.1.3. Հաճախորդի ակտիվները կամ դրանց մի զգալի մասը անհատույց կամ իր համար էականորեն ոչ շահավետ պայմաններով փոխանցվել են կամ հնարավոր է, որ կփոխանցվեն երրորդ անձանց

3.4.1.4. Հաճախորդի ակտիվների (գույքի) կամ դրանց մի զգալի մասի վրա օրենքով սահմանված կարգով կալանք կամ արգելանք է դրվել կամ հնարավոր է, որ կդրվի,

3.4.1.5. դատարանը Հաճախորդին ճանաչել է սնանկ (անվճարունակ) կամ նրա նկատմամբ սկսվել է սնանկության վարույթ,

3.4.1.6. Հաճախորդը կետանցված պարտավորություններ ունի Բանկի, այլ ֆինանսական հաստատությունների (այլ բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ և այլն), պետական կամ համայնքային բյուջեների հանդեպ,

3.4.1.7.Հաճախորդի ֆինանսական վիճակը վատթարացել է կամ առկա են նման միտումներ,

3.4.1.8. Հաճախորդի դեմ հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ վարչական գործեր, վարչական և այլ վարույթներ,

3.4.1.9. Վարկային գծի սպասարկման ընթացքում հայտնաբերվել է, որ Հաճախորդը Բանկին տրամադրել է խեղաթյուր, կեղծ, շինծու, մոլորեցնող կամ անարժանահավատ տեղեկություններ կամ փաստաթղթեր, կամ թաքցրել է Վարկային գիծը տրամադրելու համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ կամ Բանկին չի տեղեկացրել հանգամանքների էական փոփոխությունների մասին, կամ

3.4.1.10. Հաճախորդը 7(յոթ) օր շարունակ խախտել է Բանկի հետ կնքած այլ գործարքներից ծագած ֆինանսական պարտավորությունները:

3.4.1.11.Հաճախորդի գործատուից ստացված տեղեկատվության համաձայն՝ վարկային գծի տրամադրման համար հիմք հանդիսացող աշխատավարձը կամ դրան հավասարեցված այլ վճարները այլևս չեն փոխանցվելու Բանկի կողմից հաճախորդի համար բացված քարտային հաշվին:

3.4.1.12.որոշում է կայացվել Հաճախորդի լուծարման կամ վերակազմակերպման կամ Հաճախորդի կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին:

3.4.1.13. կասեցվել են հաճախորդի գործառույթները կամ դրանց մի մասը, կամ անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվել նրան տրված լիցենզիան, կամ առկա է նման կասեցման, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հնարավորություն, կամ

3.4.1.14. Բանկի գնահատմամբ Հաճախորդը Վարկային գիծն օգտագործել է ոչ նպատակային, կամ

3.4.1.15. Հաճախորդը խոչընդոտել է Բանկի ներկայացուցիչների կողմից իրականացվող ստուգումներին կամ չի ապահովել Վարկային գծի նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողության հնարավորությունը:

3.4.1.16. արժեզրկվել են է(են) ապահովման միջոց(ներ)ը, կամ չի կատարվել դրանց գծով Բանկի տված թույլտվության (համաձայնության) որևէ պայման, կամ

3.4.1.17. Վարկառուն խուսափում է Վարկային գծի պայմանագրում կամ Խառը պայմանագրում անհրաժեշտ փոփոխությունը նշված պայմանագրերով սահմանված կարգին համապատասխան կատարելուց,

3.4.1.18. Այլ ֆինանսական կազմակերպությունում (այսուհետ՝ սույն ենթակետում Ֆինանսական կազմակերպություն) առկա վարկի և/կամ վարկային գծի և/կամ օվերդրաֆտի վերաֆինանսավորման նպատակով տրամադրված վարկային գծի տրամադրումից հետո 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում սույն Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանգրի կատարման ապահովման նպատակով գրավադրված անշարժ գույքը Ֆինանսական կազմակերպության կողմից գրավադրումից չազատվելու, ինչպես նաև առկայության դեպքում այլ ֆինանսական կազմակերպության հետ կնքված ֆինանսական գործառնությունների գլխավոր (հիմնական) պայմանագիրը չլուծվելու դեպքում, կամ

3.4.1.19. առկա են Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով նախատեսված այլ հիմքեր:

2.4.2 Վարկավորման կանոնների 2.4.1 կետում նշված Հաճախորդի կողմից թույլ տրված խախտումները և հանգամանքների փոփոխությունները Բանկի համար ճանաչվում են էական:

2.4.3 Վարկավորման կանոնների 2.4.1 կետում նշված հանգամանքներն ի հայտ գալու պահից Բանկն իրավունք ունի պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում պահանջել Հաճախորդից անկախ նրանից, վաղաժամկետ կատարում պահանջելու պահին թույլ տրված խախտումները վերացվել են, թե ոչ:

2.4.4 Պարտավորությունների վաղաժամկետ կատարման պահանջի ներկայացումը Բանկին չի զրկում համապատասխան խախտման համար Հաճախորդի նկատմամբ Վարկային գծի կամ Խառը պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոց կիրառելու իրավունքից:

2.4.5 Վարկավորման կանոնների 2.4.1 կետում նշված հանգամանքներն ի հայտ գալու դեպքում Բանկը գրավոր ծանուցում է Հաճախորդին՝ Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով ստանձնած պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարման (ներառյալ տոկոսների և տուժանք (տույժերի և տուգանքների վճարումը)) մասին:

Հաճախորդը պարտավոր է վաղաժամկետ վճարման պահանջի վերաբերյալ Բանկի ծանուցումն ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում առանց որևէ հրաժարումների ամբողջությամբ վաղաժամկետ վերադարձնել տրված, սակայն չվերադարձված Վարկային գիծն ամբողջությամբ՝ հասանելիք տոկոսների հետ միասին, և փաստացի վերադարձման օրվա դրությամբ հաշվարկված (կուտակված) տոկոսագումարները և տուժանքը (տույժ ու տուգանքը): Այդ ժամկետում Բանկի վճարման պահանջը Հաճախորդի կողմից չկատարվելու դեպքում բոլոր վճարները համարվում են ժամկետանց, իսկ պարտավորությունը՝ խախտված, և Հաճախորդը դրանց չկատարման համար պատասխանատվություն է կրում Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով նախատեսված կարգով, պայմաններով ու չափերով:

2.4.6 Եթե Բանկը Հաճախորդից պահանջում է պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում, ապա Բանկն անակցեպտ կարգով, առանց Հաճախորդի լրացուցիչ

համաձայնության, գանձում է պարտքի գումարը Բանկում գտնվող նրա բոլոր բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներից:

2.4.7 Հաճախորդի կողմից Բանկի պահանջներին համապատասխան վաղաժամկետ և ամբողջական վճարում կատարելու դեպքում Վարկային գծի կամ Խառը պայմանագրերը դադարում են:

2.5 Վարկային գծի պայմանագրով Հաճախորդի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովում

2.5.1 Վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և(կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու Հաճախորդի առաջարկ-դիմումում համապատասխան նշումների առկայության դեպքում Հաճախորդի կողմից Վարկային գծի պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել Հաճախորդի դրամական միջոցների հոսքերով կամ Բանկի նկատմամբ Հաճախորդի ավանդային (բանկային հաշվի) պայմանագրից բխող պահանջի իրավունքի գրավով՝ կնքելով Խառը պայմանագիր կամ իրավաբանական անձի երաշխավորությամբ՝ կնքելով Երաշխավորության պայմանագիր:

2.5.2 Առանց սույն կանոնների 2.5.1 կետում նշված ապահովման միջոցների տրամադրման սույն կանոններով Վարկային գծեր չեն տրամադրվում:

2.6 Հաճախորդի վարկավորման ընդհանուր ծախսը (փաստացի տարեկան տոկոսադրույքը) և պայմաններ

2.6.1 Հաճախորդի վարկավորման ընդհանուր ծախսը (տարեկան փաստացի տոկոսադրույքը) հաշվարկվում է մինչև Վարկային գծի պայմանագիր կամ Խառը պայմանագիր կնքելը և ներառվում է Հաճախորդի Հաշվարկային քարտով վարկային գծի և Վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և(կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումներում:

2.6.2 Հաճախորդի վարկավորման ընդհանուր ծախսը (տարեկան փաստացի տոկոսադրույքը) հաշվարկվում է «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներքոհիշյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքն է (APR),

A – Վարկային գծի գումարը (Բանկի կողմից Հաճախորդին տրամադրված Վարկային գծի սկզբնական գումարը),

n – Վարկային գծի մարմանն ուղղված վճարի թիվը,

N – Վարկային գծի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը,

Kn – Վարկային գծի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը,

Dn – Վարկային գծի տրամադրման օրից մինչև Վարկային գծի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով,

i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են Վարկային գծի պայմանագրից կամ այլ կերպ:

2.6.3 Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի կնքման պահին՝ ենթադրելով, որ Վարկային գծի պայմանագիրը կամ Խառը պայմանագիրը գործելու է Հաշվարկային քարտով վարկային գծի պայմանագիր կնքելու կամ Վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և(կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումում նշված ժամկետում, և կողմերը պատշաճ կերպով ու պայմանավորված

ժամկետներում կատարելու են Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝

3.6.3.1. Վարկային գիծը Հաճախորդի կողմից ամբողջությամբ օգտագործվելու է Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի կնքման օրվանից սկսված.

3.6.3.2. Վարկային գծի և տոկոսի մարումները իրականացվելու են յուրաքանչյուր Փոխհաշվարկի օրը՝ Պարտադիր մարման գումարի չափով.

3.6.3.3. Վարկային գծի հերթական մարում իրականացնելուն հաջորդող օրը Հաճախորդը կրկին ամբողջությամբ օգտագործելու է Վարկային գիծը՝ չօգտագործված մասի չափով.

3.6.3.4. Վարկային գիծն ամբողջությամբ մարվելու է Վարկային գծի պայմանագրի մարման ավարտի օրը.

3.6.3.5. Վարկային գծի պայմանագիրը կնքվելու է Հաճախորդի առաջարկ-դիմումը Բանկին ներկայացնելու օրը:

2.6.4 Մարման արտոնյալ ժամանակահատվածը (առկայության դեպքում) հաշվի չի առնվում տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկում:

2.6.5 Տարվա մեջ օրերի բազային թիվը ընդունվում է տվյալ տարվա փաստացի օրացուցային օրերի քանակը:

2.6.6 Սույն կանոնների 2.6.2 կետով հաշվարկված տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կլորացվում է առնվազն մինչև մեկ հարյուրերորդական և բազմապատկվում է 100-ով՝ տոկոսային մեծություն ստանալու համար:

2.6.7 Հաշվարկների իրականացման ժամանակ կիրառվում են այն պայմանները, որոնք նախատեսված են տվյալ տեսակի Վարկային գծի մարման կարգի և Վարկավորման պայմանների համար:

2.6.8 Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկում չեն ներառվում՝

3.6.8.1. օրենքով և Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված կամ վճարվելիք տուժանքները և այլ վճարները.

3.6.8.2. այն վճարները, որոնք Հաճախորդի կողմից ենթակա են վճարման՝ անկախ ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների դիմաց վճարումը Վարկային գծով կամ առանց Վարկային գծի (cash price) կատարելու հանգամանքից.

3.6.8.3. այն վճարները, որոնք Հաճախորդը կատարում է Վարկային գծի մարման և տոկոսների վճարման նպատակով կատարվող փոխանցումների համար, ինչպես նաև այդ նպատակով բացված հաշիվների սպասարկման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդը այդ հարցերում չունի ողջամիտ այլընտրանք, և նման վճարները գերազանցում են համապատասխան վճարների համար Հայաստանի Հանրապետությունում կիրառվող միջին վճարի չափի 1.5-ապատիկը:

3.6.8.4. կազմակերպություններին, միություններին կամ այլ խմբերին (բացառությամբ նրանց, որոնց հիմնադիրը կամ մասնակիցը Բանկն է) անդամակցելու կամ բաժանորդագրվելու համար նախատեսված վճարները, որոնք բխում են Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի մաս չհամարվող պայմանագրերից նույնիսկ այն դեպքում, երբ Վարկային գծի պայմանները կախված են նման անդամակցումից.

3.6.8.5. օժանդակ ծառայությունների դիմաց կատարվող վճարները, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծառայություններից օգտվելը Վարկային գծի պայմանագիրը կամ Խառը պայմանագիրը կնքելու կամ գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայմանն է, և այդ ծառայությունների շահառուն Բանկն է, կամ Բանկը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ Հաճախորդն իրավունք ունի կնքելու օժանդակ ծառայությունների մատուցման պայմանագրեր:

2.6.9 Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ չեն ընդգրկվում՝

3.6.9.1. Լրացուցիչ վճարային քարտի թողարկման վարձը և դրա գծով քարտային հաշվի տարեկան սպասարկման վարձը,

3.6.9.2. Կրեդիտի մարման պարտավորության խախտման և վճարային սահմանաչափի գերազանցման համար հաշվարկվող տոկոսները, տուժանքը (տույժերը և տուգանքները),

3.6.9.3. Կանխիկացման և կանխիկի մուտքագրման համար միջնորդավճարները,

3.6.9.4. Տարբեր տեսակի փաստաթղթերի տրամադրման համար վճարները,

3.6.9.5. Արժույթի փոխարկման համար միջնորդավճարները:

4 Բանկի և հաճախորդի իրավունքներն ու պարտավորություններ

4.1 Բանկն իրավունք ունի՝

4.1.1 Վարկային գծի պայմանագրի խախտմամբ պարտքեր ձևավորվելու դեպքում անակցեպտ կարգով՝ առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության, գանձել պարտքի գումարները Հաճախորդի Բանկում գտնվող բանկային հաշիվներից: Հաճախորդը սույնով անհետկանչելիորեն լիազորում և իրավունք է վերապահում Բանկին Հաճախորդի Վարկային գծերից գանձել (առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության) Բանկին վճարման ենթակա դեբիտորական պարտավորությունների գումարները, այն է՝ Հաճախորդի քարտերի, վարկերի և/կամ հաշիվների սպասարկման վճարներ, չթույլատրված գերածախս, կանխիկացման միջնորդավճարներ և դրանց մասով հաշվարկված տույժ.

4.1.2 Միակողմանիորեն, առանց լրացուցիչ փաստաթուղթ կազմելու, ավելացնել Վարկային սահմանաչափը՝ հաճախորդին պատշաճ կերպով ծանուցելով:

4.1.3 Միակողմանիորեն, առանց լրացուցիչ փաստաթուղթ կազմելու, նվազեցնել նվազագույն մարման սահմանաչափը՝ հաճախորդին պատշաճ կերպով ծանուցելով:

4.1.4 Միակողմանիորեն, առանց լրացուցիչ փաստաթուղթ կազմելու, հաճախորդին պատշաճ կերպով ծանուցելով, փոփոխել (մեծացնել կամ նվազեցնել) Վարկային գծի անվանական տոկոսադրույքը, այդ թվում, բայց ոչ բացառապես, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի փոփոխման դեպքում: Անվանական տոկոսադրույքի փոփոխության չափը պայմանավորող չափանիշներն են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի նվազագույնը 2 տոկոսային կետով փոփոխումը (բարձրացումը կամ իջեցումը) կամ Հայաստանի Հանրապետության դրամի նվազագույնը 10% արժեզրկումը կամ արժևորումը: Անվանական տոկոսադրույքի փոփոխության չափը հաշվարկվում է փոփոխությունից հետո մարման (վերադարձման) ենթակա Կրեդիտի նկատմամբ: Անվանական տոկոսադրույքի կամ դրա հիմքում ընկած գործոնի մեծության մասին Վարկառուն կարող է տեղեկանալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային www.cba.am կայք էջից: Այն դեպքում, երբ Անվանական տոկոսադրույքը Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել է առանց փոփոխության չափը որոշող սույն կետում նշված հստակ չափանիշների, ապա Վարկառուն, եթե համաձայն չէ փոփոխված տոկոսադրույքին, կարող է վաղաժամկետ մարել (վերադարձնել) Վարկային գիծը առանց տուգանքների:

4.1.5 Միակողմանիորեն տրամադրել կամ ավելացնել Արտոնյալ մարման ժամանակահատվածը՝ հաճախորդին պատշաճ կերպով ծանուցելով:

4.1.6 Միակողմանիորեն փոփոխել աշխատավարձային նախագծերի շրջանակներում Բանկի հետ համագործակցող Կազմակերպությունների աշխատակիցներին տրամադրված վարկային գծերի վարկավորման պայմանները, եթե կատարվում է Կազմակերպության համար հաստատված սակագնային և վարկավորման պայմանների փոփոխություն, եթե խախտվել, փոփոխվել կամ

դադարել է Կազմակերպությունների հետ համագործակցության որևէ պայման, որը հանդիսացել է տվյալ Կազմակերպության աշխատակիցներին՝ Բանկի հետ համագործակցության ուժով արտոնյալ պայմաններով վարկավորման նախապայման (եթե անգամ նշվածը տեղի է ունեցել Հաճախորդի կամքից անկախ հանգամանքներով), եթե Հաճախորդը տեղափոխվում է աշխատանքի այլ Կազմակերպություն կամ Կազմակերպության հետ աշխատավարձային նախագծերի շրջանակներում համագործակցությունը դադարեցվում է՝ հաճախորդին պատշաճ կերպով ծանուցելով:

4.1.7 Միակողմանիորեն արտոնյալ պայմաններով տրամադրված վարկային գծերի (այդ թվում՝ աշխատավարձային նախագծերի և այլ՝ արտոնյալ սակագների կիրառում նախատեսող Բանկի հետ համագործակցության առկայության) դեպքում, արտոնությունների տրամադրման նախապայմանի դադարեցման պահից (բավարար հիմքերի առկայության դեպքում) վարկավորման պայմանները համապատասխանեցնել ոչ արտոնյալ պայմաններով վարկավորման պայմաններին կամ այլ արտոնյալ սակագներին:

4.1.8 Միակողմանիորեն փոփոխել աշխատավարձային նախագծերի շրջանակներում Բանկի հետ համագործակցող Կազմակերպությունների աշխատակիցներին տրամադրված վարկային գծերի վարկավորման պայմանները, եթե Բանկը ունի հավաստի տեղեկատվություն աշխատավարձի կամ դրան հավասարեցված այլ վճարների դադարեցման մասին՝ հաճախորդին պատշաճ կերպով ծանուցելով:

4.1.9 Հաճախորդից պահանջել վարկունակության և վարկարժանության գնահատման համար Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը.

4.1.10 Հաճախորդի կողմից Վարկային քարտը՝ դրա թողարկումից հետո 90 (իննսուն) օրվա ընթացքում չստանալու դեպքում, անվավեր համարել, ընդ որում Վարկային քարտի թողարկման համար գանձված միջնորդավճարները չեն վերադարձվում.

4.1.11 Հաճախորդի կողմից Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման արդյունքում Բանկի կողմից հատուցում ստանալու դեպքում, անակնկալ կարգով՝ առանց Հաճախորդի լրացուցիչ կարգադրության, Հաճախորդի հաշիվներից գանձել հատուցված գումարը և փոխանցել հատուցող ընկերությանը.

4.1.12 Բանկը Վարկային գծի կամ Խառը պայմանագրի հիման վրա իրեն պատկանող իրավունքը (պահանջը) գործարքով կարող է փոխանցել (զիջել) այլ անձի:

4.1.13 ՀՀ տարածքում գործող բանկերում ժամկետանց պարտավորությունների առկայության կամ պարտավորությունների մարման մասով առկա խնդիրների վերաբերյալ հիմնավոր տեղեկատվություն ստանալու դեպքում կամ 90 օրացուցային օր և ավել ժամկետանց պարտավորություններ ունենալու դեպքում դադարեցնել Վարկային գծի հետագա օգտագործման Հաճախորդի հնարավորությունը:

4.1.14 45 օր և ավել հաճախորդի կողմից Վարկային գիծը չօգտագործելու և Վարկային գծի օգտագործված մասի բացակայության դեպքում փակել Վարկային գիծը և լուծել Վարկային գծի պայմանագիրը:

4.1.15 Սույն կանոնների 4.2.4 կետով սահմանված պարտավորության խախտման դեպքում կատարել վարկավորման պայմանների փոփոխություն՝ նախապես պատշաճ կերպով ծանուցելով հաճախորդին կամ միակողմանիորեն գանձել պայմաններով կամ սույն կանոններով սահմանված հավելյալ վճարներ:

4.2 Հաճախորդը պարտավորվում է՝

4.2.1 Վարկային գծի պայմանագրին կամ Խառը պայմանագրի համապատասխան և նշված ժամկետներում վերադարձնել Վարկային գիծը (Կրեդիտները) և վճարել տոկոսները.

4.2.2 Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու դեպքում Բանկի պահանջով վերջինիս վճարել Վարկավորման

պայմաններով նախատեսված տուժանքը (տույժ և տուգանք) և դրամական պարտավորությունների խախտման համար տոկոսները,

4.2.3 Վարկային գիծն օգտագործել բացառապես Վարկային պայմաններով սահմանված նպատակներով,

4.2.4 Աշխատավարձային վարկային գծերի աշխատավարձային նախագծերի շրջանակներում վարկավորման պայմանների, Աշխատավարձային նախագծերի շրջանակներում նվազող սահմանաչափով աշխատավարձային վարկային գծերի պայմանների, Մարման արտոնյալ ժամանակահատվածով աշխատավարձային վարկային գծերի աշխատավարձային նախագծերի պայմանների, ՀԷՑ վարկավորման պայմանների կամ Աշխատավարձային վարկային գծերի ստանդարտ վարկավորման պայմանների շրջանակներում գործող վարկային գծերի սպասարկման ամբողջ ընթացքում ապահովել վարկային գծի ստացման համար հիմք հանդիսացող աշխատավարձի և/կամ դրան հավասարեցված վճարների ստացումը նույն վճարային քարտի միջոցով:

4.3 Հաճախորդն իրավունք ունի

4.3.1 Ժամկետից շուտ կատարել (մարել) Վարկային գծի պայմանագրով Բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունները:

5 Բանկի և հաճախորդի պատասխանատվություն

5.1 Հաճախորդի կողմից Վարկային գիծը մասնակի կամ ամբողջությամբ մարելու (վերադարձնելու) ժամկետները կամ Վարկային գծի պայմանագրից կամ Խառը պայմանագրից բխող պարտավորությունները խախտելու դեպքում Վարկային գծի տոկոսը դադարում է, իսկ ժամկետին չմարված (չվերադարձված) Վարկային գծին (Կրեդիտներին) վճարվում են տոկոսներ՝ Վարկավորման պայմաններով նախատեսված չափով, մինչև ժամկետանց Վարկային գծի պարտքի մարումը:

5.2 Հաճախորդը պատասխանատվություն է կրում Բանկին ներկայացված անարժանահավատ կամ թաքցրած կամ կեղծ կամ շինծու կամ խեղաթյուր տեղեկությունների համար:

5.3 Տուժանքի (տուգանք և տույժ) և տոկոսների վճարումը Հաճախորդին չի ազատում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց:

5.4 Հաճախորդը պատասխանատու է ՀՀ օրենսդրությամբ և Վարկային գծի պայմանագրով կամ Խառը պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար անկախ մեղքի բացակայությունից և (կամ) անհաղթահարելի ուժի ազդեցությունից:

6 Եզրափակիչ դրույթներ

6.1 Վարկային գծի պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև Հաճախորդի կողմից Վարկային գծի պայմանագրից կամ Խառը պայմանագրից բխող պարտավորությունների լրիվ ծավալով կատարումը:

6.2 Վարկային գծի պայմանագրից կամ Խառը պայմանագրից բխող Հաճախորդի վճարային պարտավորությունները, առանց Բանկի գրավոր անվերապահ համաձայնության, նրա հայտարարությամբ չեն կարող լրիվ կամ մասնակի դադարել Բանկի նկատմամբ Հաճախորդի հանդիպակաց պահանջի հաշվանցով:

6.3. Վարկավորման պայմանների փոփոխություն իրականացնելիս Բանկը ծանուցում է Հաճախորդին Վարկավորման կանոնների 2.2.20-2.2.25 կետերում նշված կարգով:

6.4 Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի գործողության ընթացքում Բանկի և Հաճախորդի միջև ծագած վեճերը ենթակա են լուծման դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, եթե կողմերը փոխադարձ գրավոր համաձայնությամբ այլ բան չեն որոշել: Եթե կողմերը փոխադարձ գրավոր համաձայնությամբ որոշել են վեճերի լուծումը հանձնել արբիտրաժային

դատարանի քննությանը, Հաճախորդը տեղեկացված է, որ արբիտրաժային վարույթի շրջանակներում իրավունք ունի, այդ թվում՝

Դիմել, որպեսզի արբիտրաժային տրիբունալը իր հաշվին ապահովի Վարկառուին թարգմանչական ծառայություններով, եթե ինքը չի տիրապետում դատավարության լեզվին,

Փոխել հայցի առարկան և/կամ հիմքը, նվազեցնել կամ ավելացնելու հայցային պահանջների չափը մինչև արբիտրաժային տրիբունալի կողմից գործի քննությունն ավարտված հայտարարելը,

Բացարկ հայտնել արբիտրին, եթե առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են հարուցում նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ, մասնավորապես, եթե հիմքեր կան ենթադրելու, որ նա ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված է վարույթի ելքով,

Բացարկներ հայտնել նաև վարույթին մասնակցող փորձագետներին և թարգմանիչներին: Այս դեպքում բացարկի հարցը որոշում է արբիտրաժային տրիբունալը,

Բացարկի մերժման մասին որոշումը ստանալուց հետ 30-օրյա ժամկետում դիմել իրավասու դատարան՝ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով,

Հայցադիմումը ստանալու օրվանից հինգ օրվա ընթացքում Արբիտրաժային դատարանին ուղարկել հայցադիմումի պատասխան՝ շարադրելով Բանկի կողմից գործը Արբիտրաժային դատարանին հանձնելու վերաբերյալ և/կամ ներկայացված պահանջների վերաբերյալ իր դիրքորոշումը,

Հայցադիմումի պատասխանի փոխարեն Արբիտրաժային դատարանին ներկայացնել հակընդդեմ հայցադիմում,

Ծանոթանալ գործի քննության արձանագրության բովանդակությանը,

Միջնորդել որ արձանագրության մեջ կատարվեն փոփոխություններ և/կամ լրացումներ,

Ստանալ գործի քննության արձանագրության պատճենը,

Վարել գործերն անմիջականորեն (անձամբ) կամ պատշաճ լիազորված ներկայացուցիչների միջոցով,

Միջնորդել արբիտրաժային տրիբունալին վերացնելու իր կողմից կիրառված հայցի ապահովման միջոցները,

Միջնորդել արբիտրաժային վարույթին երրորդ անձի ներգրավման համար,

Տեղեկացնելով Բանկին՝ արբիտրաժային վճիռը ստանալուց հետո տասնհինգ օրվա ընթացքում դիմել արբիտրաժային տրիբունալին վճռի որևէ կոնկրետ կետ կամ մաս պարզաբանելու համար: Եթե արբիտրաժային տրիբունալը հիմնավոր է համարում այդպիսի դիմումը, ապա դրա ստացումից հետո երեսուն օրվա ընթացքում տալիս է անհրաժեշտ պարզաբանումներ: Այդ պարզաբանումը դառնում է վճռի բաղկացուցիչ մասը,

Բանկին տեղյակ պահելով՝ արբիտրաժային վճիռը ստանալուց հետո տասնհինգ օրվա ընթացքում դիմել արբիտրաժային տրիբունալին կայացնեու լրացուցիչ վճիռ այն պահանջների վերաբերյալ, որոնք պատշաճ կերպով ներկայացվել են արբիտրաժային վարույթում, սակայն վճռում չեն արտացոլվել: Եթե արբիտրաժային տրիբունալը հիմնավոր համարի այդ դիմումը, ապա պարտավոր է այն ստանալուց հետո վաթսունօրյա ժամկետում կայացնել լրացուցիչ վճիռ:

Հաճախորդն արբիտրաժային վարույթի շրջանակներում պարտավոր է, այդ թվում՝

Հասցեի փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես հաղորդել Արբիտրաժային դատարանին,

Հայցադիմումին կից ներկայացնել սահմանված կարգով հաշվարկված արբիտրաժային վճարների կատարումը հավաստող փաստաթղթերը,

Հայցադիմումի պատասխանում հանգամանորեն շարադրել, թե փաստական և իրավական հանգմանքներից որոնք է ընդունում և որոնց դեմ է առարկում և ինչ հիմքերով է դրանց դեմ առարկում.

Արբիտրաժային համաձայնության վավերության կամ կիրառելի լինելու վերաբերյալ առարկություններ ներկայացնելու դեպքում շարադրել դրանք Արբիտրաժային դատարանին ուղղված պատասխանի մեջ՝ միաժամանակ նշելով հիմնավորումները,

Հայցադիմումի պատասխանին կից ներկայացնել այն բոլոր ապացույցները, որոնցով հիմնավորում են իր առարկությունների հիմքում ընկած հանգամանքները,
Եթե Բանկի կողմից ներկայացվում է հակընդդեմ հայցադիմում, ապա հակընդդեմ հայցադիմումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում արբիտրաժային տրիբունալին ներկայացնել հակընդդեմ հայցադիմումի պատասխան, որը պետք է ներառի առարկություններ հակընդդեմ հայցապահանջների դեմ՝ հայցային պահանջների դեմ առարկություններ բերելու համար նախատեսված կարգով: Հակընդդեմ հայցադիմումի պատասխանին կից պետք է ներկայացվեն բոլոր այն ապացույցները, որոնցով հիմնավորվում են առարկությունների հիմքում ընկած հանգամանքները,
Ապացուցել իր պահանջների կամ առարկությունների հիմքում ընկած հանգամանքները,
Ներկայացնել գրավոր ապացույցների բնօրինակները կամ դրանց պատշաճ վավերացված պատճենները,
Արբիտրաժային տրիբունալի վճիռները կատարել կամավոր վճռում նշված ժամկետում: Եթե վճռում նշված չէ դրա կատարման ժամկետը, ապա այն ենթակա է կատարման անհապաղ:
Արբիտրաժային դատարանի ընտրության դեպքում Վարկառուն գիտակցում է, որ Արբիտրաժային դատարանի վճիռը լինելու է վերջնական, ենթակա չի լինելու բողոքարկման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Վարկառուն պարտավորվում է հետագայում չշահարկել և չվիճարկել այդ փաստի վերաբերյալ իր տեղեկացվածության հանգամանքը:

6.5 Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի հետ կապված ցանկացած թղթակցություն, դատական ծանուցում, այդ թվում՝ դատավարական փաստաթուղթ, ուղարկվում են Վարկային գծի պայմանագրի կամ Խառը պայմանագրի կնքման կապակցությամբ միմյանց տրամադրած հասցեներով և համարվում են հասցեատիրոջ կողմից ստացված (հանձնված), թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի գտնվում կամ չի բնակվում, եթե Բանկը կամ հաճախորդը միմյանց գրավոր չեն հայտնել իրենց փոստային հասցեները (գտնվելու վայրի, բնակության, հաշվառման) փոխելու մասին, որի իրավական հետևանքների ռիսկը կրում է այն կողմը, ով պարտավոր էր մյուս կողմին իրազեկել փոփոխությունների մասին:

6.6Եթե վեճը ենթակա է դատական քննության, Բանկը և Հաճախորդը տալիս են իրենց համաձայնությունը գործով արագացված դատաքննություն, ինչպես նաև պարզեցված վարույթ կիրառելու համար: